# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

# «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 22-ին, Մոսկվայում:

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագիրը մշակվել է Միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթներին համապատասխան: Այն նպատակ ունի պայմաններ ստեղծել ԵԱՏՄ շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազատ շրջանառության ապահովման, գործառնությունների իրականացման ոլորտում արդյունավետ միջոցառումների մշակման, ինչպես նաև անդամ պետությունների մրցակցային առավելություններին և դրանց փոխգործակցությանն ուղղված փոխշահավետ առևտրատնտեսական մեխանիզմների ձևավորման համար: Համաձայնագրով սահմանվում է, որ մեկ անդամ պետության տարածքում ոսկերչական և այլ արտադրատեսակները հարգադրոշմով դրոշմավորված լինելու պարագայում մեկ այլ անդամ պետության տարածք տեղափոխվելու դեպքում ենթակա չեն լրացուցիչ փորձարկման, հետազոտման ու դրոշմավորման:

Համաձայնագրի հավելվածով սահմանվում է Կարգ ոսկերչական և այլ իրերի պատրաստման համար ոչ պիտանի թանկարժեք քարերի դասակարգման չափորոշիչների ու կանոնների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ

գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը նպատակահարմար է:

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ**